МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No._____

«01» հունիսի 2023թ.

# ՈՐՈՇՈՒՄ

## «Գ.Գ.Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար 2023 թվականի մայիսի 02-ին համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

«ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/07» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 12.05.2023թ. ժամը 12:35-ը: Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ ամփոփվել է 15.05.2023թ:

Էլեկտրոնային հակադարձ աճուրդի ավարտին 2-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «Գ.Գ.Է. հոլդինգ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտով ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ի հայտ են եկել մի շարք անհամապատասխանություններ՝ մասնավորապես.

- Հայտում բացակայել է Հավելված N 1.3-ը՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը:
- Էլեկտրոնային աճուրդի համակարգ է կցվել այլ պատվիրատուի կողմից կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն (Հավելված 1), որը հաստատված չի եղել թվային էլեկտրոնային ստորագրությամբ:
- Էլեկտրոնային աճուրդի համակարգում չեն լրացվել ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ղեկավարելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և Մասնակցին ուղարկվել է

ծանուցում՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում Մասնակցի կողմից չեն արվել համապատասխան շտկումները, ինչի հետևանքով գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, Մասնակցի հայտը 2-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով գնահատել է անբավարար և մերժել: «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կողմից կազմակերպված «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինները հայտարարվել են չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, որի մասին հայտարարությունը հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

Ստորև ներկայացնում եմ «Գ.Գ.Է. հոլդինգ» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքն ապահովող տեղեկատվությունը.

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Անվանումը | ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը/ | Գործու նեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| «Գ.Գ.Է. հոլդինգ» ՍՊԸ | 01053569 | ՀՀ, ք. Երևան, Մոլդովական փ. 48/1, բն. 25 | V | | | Որոշման ամսաթիվը՝ 01.06.2023թ., ընթացակարգի ծածկագիրը՝ ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/07 |

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը, որոշեցի.

Առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարությանը «Գ.Գ.Է. հոլդինգ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ